ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 մայիսի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

60
(3269)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՔՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ ԳՈՒՄԱՐՆԵՐ ԵՆ ԲԱԺԱՆՎՈՒՄ

«Ժողովուրդի» օրաթերթի տեղեկություններով՝ հունիսի 7-ի ընտրություններին ընդառաջ՝ սահմանամերձ զորամասերում ծառայող զինծառայողներին եւ աշխատակիցներին տարբեր դրամական վճարներ են տրամադրվում: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ վերջին երկու ամիսներին արդեն իսկ իրականացվող այդ վճարումները նախատեսված են շարունակել մինչեւ 2026 թվականի հունիս: Խոսքը աշխատավարձերի հավելավճարների, պարգեւավճարների կամ այլ ձեւաչափով տրվող գումարների մասին է: Ուշագրավ է, որ այս ամենը տեղի է ունենում նախընտրական շրջանում, երբ պետական համակարգում ցանկացած լայնածավալ ֆինանսական բաշխում բնականաբար առաջացնում է քաղաքական նպատակահարմարության եւ հնարավոր ընտրական ազդեցության հարցեր:

«Ժողովուրդ» օրաթերթը թեմայի վերաբերյալ պարզաբանում էր խնդրել ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանից՝ հասկանալու համար՝

- ի՞նչ բնույթի վճարների մասին է խոսքը (հավելավճար, պարգեւավճար, մեկանգամյա խրախուսում եւ այլն),
- ի՞նչ իրավական ակտերով կամ ծրագրերով են դրանք սահմանված, արդյո՞ք դրանք պայմանավորված են ծառայության վայրով (սահմանամերձ գոտի), ռիսկայնությամբ կամ այլ գործոններով,
- ի՞նչ ժամանակահատվածում է նախատեսվում դրանց տրամադրումը:

ՊՆ-ից ստացված պատասխանը, սակայն, ոչ թե փարատում է կասկածները, այլ ավելի է խորացնում դրանք:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ նախագահ Դանիել Իոաննիսյանը գրում է. «Ապարանի տարածաշրջանում դպրոցների աշխատողների ու աշակերտների կողմից դասապրոցեսի փոխարեն «Քաղաքացիական պայմանագրի» նախընտրական քարոզարշավին մասնակցելը առերեւույթ խախտում է Ընտրական օրենսգրքի 23-րդ եւ Աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածները: Անկախ դիտորդ - Independent Observer դաշինքում դիտարկում ենք նշված դեպքով դատարան դիմելու եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 40.8 հոդվածով վարչական պատասխանատվության պահանջ ներկայացնելու հարցը: Հավելեմ, որ «Անկախ դիտորդ» դաշինքում չունենք փաստեր այն մասին, որ դասատուներն ու աշակերտները քարոզարշավին մասնակցել են իրենց կամքին հակառակ, այդ դեպքում (կամ, եթե նման փաստեր ավելի ուշ ի հայտ գան) տեղի ունեցածը առերեւույթ կպարունակեր Քրեական օրենսգրքով արգելված արարքի տարրեր: Հետեւաբար, եթե որեւէ մեկը փաստեր տրամադրի այդ դպրոցների դասատուներին կամ աշակերտներին պարտադրելու վերաբերյալ, «Իրազեկ քաղաքացիների միավորումից» մինչեւ կես միլիոն դրամ պարգեւ կստանա»:

Հունիսի 7-ին ԱԺ ընտրություններին ընդառաջ՝ քաղաքական ուժերը սկսել են ակտիվ քարոզարշավը՝ տարբեր ձեւաչափերով, տարբեր մեկնարկային կետերից եւ, բնականաբար, տարբեր գնահատականներով իրենց հնարավորությունների վերաբերյալ: Armlur.am-ը զրուցել է «Ազգային ժողովրդավարական բեւեռ» համահայկական կուսակցության ներկայացուցիչ Գեւորգ Կարապետյանի հետ՝ պարզելու համար՝ իրենց քարոզարշավը սկսել են ու ինչ ձեւաչափով: Վերջինս հայտարարեց, որ սկսել են ոչ թե սովորական շտաբային հանդիպումով, այլ խորհրդանշական երթուղով՝ Էջմիածնի Սուրբ տաճարից մինչեւ Մատենադարան: «Սկսել ենք մայիսի 8-ին Էջմիածնի Սուրբ տաճարից, հետո ԱԺ-ի դիմաց հայտարարություն հնչեցրինք, ապա քայլերթով գնացինք Մատենադարան»,- ասաց նա: Բայց «Բեւեռի» հիմնական դժգոհությունը, ըստ Կարապետյանի, ոչ թե վարչական ճնշումներն են, այլ «մեդիա բլոկադան»: «Մեզ չեն լուսաբանում: Մենք նորաստեղծ ուժ չենք, որ ճնշումները մեզ համար նորություն լինեն»,- նշեց նա՝ հիշեցնելով նախկին քրեական եւ վարչական ճնշումների մասին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Թեեւ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն ջանում է ապացուցել, որ «Ուժեղ Հայաստան»-ի վերաբերյալ հրապարակվող գաղտնալսումները քաղաքական չեն, սակայն «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ հասան, որ անհարմար իրավիճակ է ստեղծվել. ընդդիմադիրներին լսելով՝ հասել են Սյունիքի վարչական շրջանների գործող ղեկավարներին: Մայիսի 7-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն պաշտոնապես տեղեկացրեց, որ իրականացվող քրեական վարույթով բացահայտվել են ընտրակաշառք տալու, ստանալու եւ անձանց ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու դեպքեր: Մասնավորապես, պաշտոնապես հաղորդվեց, որ Կոմիտեն եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ծառայողները փաստական տվյալներ են ստացել այն մասին, որ Ռուսաստանի Դաշնության Օրենբուրգ քաղաքում բնակվող, ազգությամբ հայ գործարարի կազմակերպմամբ՝ վերջինիս մերձավոր շրջապատի անձինք 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններին «Ուժեղ Հայաստան» կուսակցության օգտին քվեարկելու պայմանով, մի շարք ընտրողների պարտք-գումարի մասը զիջելու, աշխատանքի ընդունելու եւ այլ եղանակով խոստացել են տալ կաշառք:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԱՅՍ ՊԱՀԻՆ ՆՄԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՉԿԱ»

ArmLur.am-ը զրուցել է ՀՀ ԱԳ Նախարար Արարատ Միրզոյանի հետ:

- Մայիսի 28-29-ին տեղի է ունենալու ԵԱՏՄ գագաթնաժողովը, որին Հայաստանի կողմից վարչապետի մակարդակով մասնակցություն չի լինելու: Ունե՞ք հստակ որոշում՝ Հայաստանը մնալո՞ւ է ԵԱՏՄ-ում, թե՞ դուրս է գալու եւ շարժվելու է դեպի Եվրամիություն:

- Ես չգիտեմ՝ ո՞վ է ասել, որ մինչեւ մայիսի 27-ը նման որոշում պետք է կայացվի: Այդպիսի հայտարարություն մեզ հայտնի չէ: Երբ գա այն պահը, երբ պետք լինի որոշում կայացնել, մենք դա կանենք:

- Բայց մինչ այդ ինչել էին հայտարարություններ, որ Հայաստանը պետք է հստակեցնի իր դիրքորոշումը:

- Ո՞վ է ասել: Մենք բազմիցս նշել ենք, որ այս պահին փորձում ենք համատեղել եվրոպական ուղղությամբ ընթացքը եւ ԵԱՏՄ-ում անդամակցությունը: Քանի դեռ դա հնարավոր է, շարունակելու ենք այդ քաղաքականությունը:

- Սակայն Ռուսաստանը հայտարարում է, որ միաժամանակ եւ ԵՄ, եւ ԵԱՏՄ լինել հնարավոր չէ:

- Մենք էլ ենք ասում, որ այդ երկու տարբերակները համատեղելի չեն: Բայց այսօր դեռ այն փուլը չէ, երբ ստիպված ենք ընտրություն կատարել: Հայաստանը շարունակում է ունենալ բնականոն հարաբերություններ ԵԱՏՄ գործընկերների հետ, միաժամանակ մեր հասարակության եվրոպական ակնկալիքները եւս ակնհայտ են: Երբ այդ որոշման պահը գա, մենք կհավաքվենք եւ կկայացնենք համապատասխան որոշումը: Այս պահին նման որոշում չկա:

- Կա տեսակետ, որ եթե այս անորոշությունը շարունակվի, Ռուսաստանը կարող է տնտեսական ճնշումներ կիրառել, օրինակ՝ բարձրացնել գազի գինը:

- Դուք շատ տեղեկացված եք: Եթե նման տեղեկություններ ունեք, երեւի ուղիղ աղբյուրներից եք ստանում: Բայց ես կարող եմ ասել, որ մենք մշտական կապի մեջ ենք Ռուսաստանի Դաշնության մեր գործընկերների հետ եւ բոլոր հարցերը քննարկում ենք ուղիղ երկխոսության ձեւաչափով:

- Մինչեւ մայիսի 27-ը որեւէ հստակ հայտարարություն չի՞ լինելու:

- «Ժողովուրդ» օրաթերթը կամ որեւէ այլ լրատվամիջոց կարող է կարծիք հայտնել, բայց դա չի նշանակում, որ մենք պարտավոր ենք հենց այդ ժամկետներում որոշում կայացնել: Մենք մեր դիրքորոշումը ներկայացրել ենք եւ նորից կներկայացնենք անհրաժեշտության դեպքում:

- Բայց հանրությունը ցանկանում է հստակ հասկանալ՝ Հայաստանը մնո՞ւմ է ԵԱՏՄ-ում, թե՞ շարժվում է դեպի ԵՄ:

- Ես արդեն մի քանի անգամ պատասխանեցի: Երբ որոշման ժամանակը գա, մենք այդ որոշումը կկայացնենք: Այս պահին շարունակում ենք աշխատել երկու ուղղություններով այնքան ժամանակ, քանի դեռ դա հնարավոր է:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՈՐ Է ՆԻՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՑԸ

2026 թվականի հունիսի 7-ին նախատեսված Ազգային Ժողովի ընտրություններին ընդառաջ՝ քաղաքական դաշտում ուշադրություն է գրավում նաեւ «Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցությունը, որը մասնակցում է ընտրություններին 2-րդ համարի ներքո:

Քաղաքական ուժի վարչապետի թեկնածուն Նինա Կարապետյանցն է՝ իրավապաշտպան եւ փաստաբան, ով երկար տարիներ գործունեություն է ծավալել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում:

Ի տարբերություն ընտրապայքարին մասնակցող մի շարք այլ քաղաքական գործիչների՝ Նինա Կարապետյանցի գույքային հայտարարագիրը հանրային հասանելի չէ: Միեւնույն ժամանակ, նրա մասնագիտական կենսագրությունը հիմնականում կապված է իրավապաշտպան աշխատանքի հետ:

Կարապետյանցը 2009 թվականից աշխատում է Հելսինկյան ասոցիացիայում՝ որպես փաստաբան եւ մոնիթորինգային խմբի ղեկավար: Նրա պարտականությունների շրջանակում են կազմակերպության մշտադիտարկման աշխատանքների համակարգումը, ներկայացված նյութերի ուսումնասիրությունը, ինչպես նաեւ զեկույցների պատրաստման գործընթացին մասնակցությունը:

Տարիների ընթացքում նա մասնակցել է մի շարք մասնագիտական վերապատրաստումների եւ դասընթացների: Դրանց թվում են Եվրոպական միության ֆինանսավորմամբ եւ Եվրոպայի խորհրդի կողմից իրականացված «Դատական փորձաքննությունների հիմնախնդիրներ» ծրագիրը, ԵԱՀԿ-ի եւ ՀՀ փաստաբանների պալատի կազմակերպած սեմինարները, ինչպես նաեւ քաղաքացիական դատավարության, մարդու իրավունքների պաշտպանության եւ պետական կառավարման ոլորտներին առնչվող վերապատրաստումներ:

«Բոլորին դեմ եմ» շարժումը վերջին շաբաթներին առանձնացել է ոչ միայն իր քաղաքական հայտարարություններով, այլեւ քարոզչական ոչ ստանդարտ քայլերով: Ավելի քան 400 անդամ ունեցող շարժման կազմում հիմնականում երիտասարդներ են, որոնցից շատերը հանրությանը դեռեւս լայն ճանաչում չունեն: Հատկանշական էր նաեւ ԿԸՀ արտահերթ նիստում կուսակցության ներկայացուցիչների ներկայանալը ֆիլմի հերոսների կերպարներով: Քարոզարշավի ընթացքում քաղաքական ուժն ակտիվորեն օգտագործում է նաեւ «Սփայդերմենի» կերպարը՝ փորձելով տարբերվել մյուս քաղաքական ուժերից եւ ուշադրություն հրավիրել իր գործունեության վրա:

Կուսակցության ներքին ընտրությունների արդյունքում հենց Նինա Կարապետյանցն է առաջադրվել վարչապետի թեկնածու: Քաղաքական ուժի ֆեյսբուքյան էջում նշվում է, որ հաղթանակի դեպքում նա կգլխավորի «100-օրյա կառավարությունը»:

Ուշագրավ է նաեւ կուսակցության ծրագրային դրույթներից մեկը, ըստ որի՝ վարչապետի թեկնածուն հաղթանակի դեպքում պարտավորվում է հաջորդող 10 տարիների ընթացքում չզբաղվել քաղաքականությամբ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՎՍ ՄԵԿ ԿԱՐԵՎՈՐ ՔԱՅԼ

Հայ-թուրքական կարգավորման գործընթացում հերթական քայլն է արձանագրվել: Հայ-թուրքական կարգավորման հարցով Թուրքիայի հատուկ բանագնաց Սերդար Քըլըչը հայտարարել է, որ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ ուղիղ առեւտրի մեկնարկի ուղղությամբ կարեւոր առաջընթաց է գրանցվել: Քըլըչը «X» հարթակում տարածել է Թուրքիայի արտաքին գործերի նախարարության հաղորդագրությունը եւ նշել, որ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ցուցումներով շարունակվող կարգավորման գործընթացի շրջանակում եւս մեկ կարեւոր քայլ է կատարվել՝ տարածաշրջանում կայուն խաղաղության եւ կայունության հաստատման նպատակով: «Ցանկանում եմ, որ սա հաջող լինի նախ երկու երկրների բնակիչների, ապա եւ մեր տարածաշրջանի բոլոր գործարարների եւ ժողովուրդների համար»,- գրել է նա: Ավելի վաղ Թուրքիայի ԱԳՆ խոսնակ Օնջու Քեչելին հայտարարել էր, որ Հայաստանի հետ 2022 թվականից ընթացող կարգավորման գործընթացի շրջանակում իրականացված վստահության ամրապնդման քայլերի արդյունքում՝ 2026 թվականի մայիսի 11-ի դրությամբ ավարտվել են Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ ուղիղ առեւտրի մեկնարկին առնչվող բյուրոկրատական նախապատրաստական աշխատանքները: Ըստ թուրքական կողմի՝ նոր կարգավորման շնորհիվ արդեն հնարավոր է դարձել, որ Թուրքիայից որեւէ երրորդ երկիր, այնտեղից էլ Հայաստան ուղարկվող կամ նույն երթուղով տեղափոխվող ապրանքների վերջնական նպատակակետը կամ ելակետը նշվի որպես «Հայաստան/Թուրքիա»: Միաժամանակ նշվում է, որ երկու երկրների միջեւ ընդհանուր սահմանի բացմանն ուղղված տեխնիկական եւ բյուրոկրատական աշխատանքները դեռ շարունակվում են: Թուրքիայի ԱԳՆ-ն նաեւ հայտարարել է, որ Հարավային Կովկասում խաղաղության եւ բարեկեցության ամրապնդման համար ձեւավորված պատմական հնարավորության պայմաններում Անկարան շարունակելու է աջակցել տարածաշրջանում տնտեսական համագործակցության զարգացմանը: Հիշեցնենք, որ Հայաստանի ԱԳՆ-ն եւս ողջունել էր ՀՀ հետ երկկողմ առեւտուր իրականացնելու արգելքները վերացնելու վերաբերյալ Թուրքիայի որոշումը՝ ընդգծելով, որ այն կարեւոր է երկու երկրների միջեւ առեւտրի, գործարար կապերի եւ տարածաշրջանային տնտեսական համագործակցության ընդլայնման տեսանկյունից: Հայկական կողմը նաեւ նշել էր, որ սա կարեւոր քայլ է լիարժեք հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, որի շարունակությունը կարող է լինել սահմանների բացումն ու դիվանագիտական հարաբերությունների հաստատումը:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

TRIPP–Ի ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՄՇՈՒՇՈՏ ԵՆ

Ռուսական պետական ՏԱՍՍ գործակալությունը հրապարակել է հոդված, որտեղ անդրադարձ է կատարվում «Թրամփի երթուղի» (Trump Route for International Peace and Prosperity - TRIPP) նախագծի հեռանկարներին՝ նշելով, որ ԱՄՆ-Իրան հակամարտության ֆոնին դրա իրագործման հնարավորությունները մշուշոտ են: ՏԱՍՍ-ի հետ հարցազրույցում Ռուսաստանի ԱԳՆ ԱՊՀ երկրների չորրորդ վարչության տնօրեն Միխայիլ Կալուգինը հայտարարել է, որ մի շարք փորձագետներ կարծում են՝ իրանա-ամերիկյան հակասությունների պայմաններում նախագծի գործարկման հեռանկարները թույլ են: Նրա խոսքով՝ Իրանը բացասաբար է վերաբերվում իր հյուսիսային սահմաններին ԱՄՆ ներկայությանը, իսկ Կենտրոնական Ասիայից Եվրոպա տանող երթուղու նկատմամբ ամերիկյան վերահսկողությունը կարող է անվստահություն առաջացնել նաեւ ասիական գործընկերների շրջանում: Կալուգինը նշել է, որ առանց ռուսական եւ չինական բեռների չափազանց դժվար կլինի վերադարձնել նախագծում կատարվելիք ներդրումները: Ռուս դիվանագետը նաեւ թվարկել է մի շարք գործոններ, որոնք, ըստ նրա, պետք է հաշվի առնել: Դրանց թվում են հայ-իրանական սահմանին ռուս սահմանապահների ներկայությունը, ադրբեջանական երկաթուղու հետ անխափան կապ ապահովելու համար ռուսական ստանդարտի երկաթուղային գծի անհրաժեշտությունը, Հայաստանի երկաթուղային ցանցի կառավարումը «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից մինչեւ 2038 թվականը գործող կոնցեսիոն պայմանագրով, ինչպես նաեւ - Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը: Կալուգինը նշել է, որ այս նախագիծը, որը նախատեսում է Ադրբեջանի հիմնական հատվածը Նախիջեւանին կապող տրանսպորտային ուղի Հայաստանի հարավով, «անակնկալ չի առաջացել»: Նրա խոսքով՝ դրան նախորդել է ռուս-ադրբեջանա-հայկական եռակողմ ձեւաչափով երկու տարվա աշխատանքը՝ փոխվարչապետերի համանախագահությամբ գործող եռակողմ խմբի շրջանակում:

«2023 թվականին մենք մոտ էինք այսպես կոչված «Մեղրիի երթուղու» գործարկմանը, որը պետք է ոչ միայն ապահովեր տարանցումը Հայաստանի հարավով դեպի Նախիջեւան, այլ նաեւ, ըստ էության, կապեր հայկական եւ ադրբեջանական երկաթուղիները»,- ասել է ռուս պաշտոնյան: Նա պնդել է, որ այժմ Հայաստանը փորձում է նույն արդյունքին հասնել արդեն «Թրամփի երթուղու» միջոցով, սակայն տարբերությունն այն է, որ հայ-ամերիկյան նախաձեռնությունը, ի տարբերություն «Մեղրիի երթուղու», ինքնաբերաբար չի նախատեսում հայկական եւ ադրբեջանական երկաթուղային ենթակառուցվածքների լիարժեք միացում:

Կալուգինի խոսքով՝ «Երեւանը 2023 թվականին միտումնավոր սառեցրել է եռակողմ աշխատանքային խմբի գործունեությունը»:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՀԱՋԱՆԳ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՎԱՆԴԱԼԻԶՄԻ Է ԵՆԹԱՐԿԵԼ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ

Սոցցանցերի մշտադիտարկման արդյունքում ակնհայտ է դարձել, որ Ադրբեջանի իշխանությունների վանդալիզմի հերթական թիրախը դարձել է ժամանակավորապես բռնազավթված Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի զոհված ազատամարտիկների գերեզմանոցը:

Ադրբեջանական սոցցանցային տիրույթում հրապարակված տեսանյութի ուսումնասիրությունն ու վերլուծությունը՝ մշակութային ժառանգության ոչնչացման, էթնիկ ատելության եւ միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումների համատեքստում, թույլ են տալիս արձանագրել մի շարք խիստ մտահոգիչ եւ դատապարտելի դրսեւորումներ: Այս մասին գրել է Արցախի մշակութային ժառանգության օմբուդսմեն, «Ազգային» պատմամշակութային ՀԿ փոխնախագահ Հովիկ Ավանեսովը:

«Առաջին հերթին ակնհայտ է էթնիկ եւ կրոնական թիրախավորման հանգամանքը: Գերեզմանաքարերի վրա առկա հայերեն արձանագրություններն ու զոհված ազատամարտիկների պատկերները հստակ ցույց են տալիս, որ թիրախավորվել է ոչ թե պարզապես գերեզմանոց, այլ հայկական ինքնության, ազգային հիշողության եւ հոգեւոր ժառանգության կարեւորագույն վայր: Սա սովորական վանդալիզմ չէ, այլ էթնիկ ատելության վրա հիմնված կանխամտածված գործողություն, որի նպատակը հայկական հետքի վերացումն ու պատմական հիշողության ջնջումն է: Տեսանյութում արձանագրված գործողություններն առանձնանում են բացառիկ ցինիզմով եւ սրբապղծությամբ:

Տեսանյութի հեղինակը միտումնավոր քայլում է տապանաքարերի վրայով, կանգնում հանգուցյալների դիմանկարների վրա, հարվածում ու պղծում դրանք: Այս վարքագիծը ոչ միայն գերեզմանների վնասում է, այլեւ զոհվածների հիշատակի, հուղարկավորության սրբության եւ մարդկային արժանապատվության կանխամտածված անարգանք: Նման գործողությունները հակասում են ոչ միայն միջազգային իրավական նորմերին, այլեւ համամարդկային բարոյականության ամենատարրական սկզբունքներին:

Տեսանյութում հստակ երեւում են նաեւ բազմաթիվ ջարդված, կտրատված, տեղահանված եւ վնասված գերեզմանաքարեր, ինչը վկայում է, որ գերեզմանոցը ենթարկվել է համակարգված եւ նպատակային ավերածության: Վնասների ծավալն ու բնույթը վկայում են ոչ թե առանձին միջադեպի, այլ մշակութային արժեքների կանխամտածված ոչնչացման քաղաքականության մասին: Բաքվի բռնապետական վարչակարգի կողմից ժամանակավորապես բռնազավթված տարածքներում հայկական մշակութային եւ հիշողության վայրերի դեմ իրականացվող նման գործողությունները վաղուց արդեն կրում են շարունակական եւ համակարգային բնույթ:

Առանձնակի վտանգավոր եւ դատապարտելի է նաեւ հոգեբանական ահաբեկչության բաղադրիչը:

Գործողությունների տեսաձայնագրումը եւ դրանց տարածումը սոցիալական հարթակներում, ինչպես նաեւ տեսանյութում հնչող ադրբեջաներեն արտահայտությունները փաստում են, որ կատարվածը նպատակ ունի ոչ միայն ոչնչացնել հայկական մշակութային ներկայության հետքերը, այլեւ հոգեբանական ճնշում գործադրել զոհվածների հարազատների, բռնի տեղահանված արցախահայության եւ ամբողջ հայ հասարակության վրա: Սա բացահայտ նվաստացման, վախի եւ անպաշտպանության մթնոլորտ ձեւավորելու փորձ է, որն ունի նաեւ քարոզչական բնույթ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեսանյութը կարող է ծանր հոգեբանական ազդեցություն ունենալ զոհված ազատամարտիկների հարազատների եւ հանրության վրա, այն չենք հրապարակում: Տեսանյութը պահպանվում է Արցախի մշակութային ժառանգության օմբուդսմենի գրասենյակի արխիվում՝ որպես հայկական մշակութային ժառանգության դեմ իրականացվող հերթական հանցավոր գործողության փաստական ապացույց:

Հարկ է ընդգծել, որ Վաղուհաս գյուղում հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի պղծման սա առաջին արձանագրված դեպքը չէ: Դեռեւս 2024 թվականի հունվարի 5-ին մեր գործընկեր՝ Արցախի պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն ՊՈՒԱԿ-ը ահազանգել էր, որ ադրբեջանցի զինվորները ոչնչացրել են գյուղի ճանապարհամերձ հատվածում գտնվող՝ 2020 թվականին Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված լայնածավալ պատերազմի ընթացքում զոհված Մխիթար Աղաբեկյանի հիշատակին 2021 թվականին կանգնեցված խաչքարը: Խաչքարի հեղինակն էր Յուրա Մանգասարյանը: Այս փաստը եւս մեկ անգամ ապացուցում է, որ հայկական հիշողության եւ մշակութային ներկայության դեմ իրականացվող գործողությունները պատահական կամ մեկանգամյա դրսեւորումներ չեն:

Ադրբեջանի իշխանությունները ժամանակավորապես բռնազավթված Արցախում առանձնակի դաժանությամբ եւ հետեւողականությամբ ոչնչացնում ու պղծում են հայրենիքի պաշտպանության համար նահատակված հերոսների հիշատակը հավերժացնող հուշարձաններն ու գերեզմանոցները: Այս գործողություններն արդեն դուրս են եկել առանձին վանդալիզմի դեպքերի շրջանակից եւ վերածվել պետական մակարդակով իրականացվող համակարգված քաղաքականության, որի նպատակը հայկական պատմամշակութային ժառանգության վերացումն ու ազգային հիշողության ջնջումն է: Արցախի տարբեր բնակավայրերում արդեն արձանագրվել են նմանատիպ տասնյակից ավելի փաստեր, որոնք փաստում են մշակութային ցեղասպանության հետեւողական ընթացքը:

Միջազգային հանրության լռությունն ու ոչ համարժեք արձագանքը շարունակում են նպաստել անպատժելիության մթնոլորտի խորացմանը: Մինչդեռ մշակութային ժառանգության, սրբավայրերի եւ գերեզմանոցների նկատմամբ նման գործողությունները պետք է արժանանան հստակ քաղաքական, իրավական եւ բարոյական գնահատականի: Երբ թիրախավորվում են զոհվածների գերեզմանները եւ ազգային հիշողության վայրերը, վտանգվում են ոչ միայն մեկ ժողովրդի իրավունքները, այլեւ համամարդկային այն արժեքները, որոնց վրա հիմնված է քաղաքակիրթ աշխարհի գոյությունը»,-գրել է նա:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՐԿՈՒ ՕՐՈՎ ԱՐՁԱԿՈՒՐԴ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ երեկ եւ այսօր ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը գտնվելու է արձակուրդում: Այժմ ՀՀ-ում նախընտրական քարոզարշավ է՝ հունիսի 7-ին սպասվող խորհրդարանական ընտրություններից առաջ: Ս. Պապիկյանը ակտիվ մասնակցում է ՔՊ-ի նախընտրական քարոզարշավին, քայլում է Նիկոլ Փաշինյանի հետ Երեւանի տարբեր վարչական շրջաններում ու շրջում մարզերով: Արձակուրդի մեկնելու նպատակը քարոզարշավին մասնակցելն է: Կառավարության ողջ կազմն այս պահին արձակուրդում է, քարոզարշավի է մասնակցում: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Պապիկյանին արձակուրդում գտնվելու ընթացքում կփոխարինի ՀՀ ՊՆ փոխնախարար Արման Սարգսյանը:

Ս. Գ.

ՄԻԱԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԵՆՔ

ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանն ուղերձով դիմել է քաղաքացիներին՝ մանրամասներ ներկայացնելով Հայաստան-ԵՄ վիզաների ազատականացման գործընթացի վերաբերյալ: Նախարարը շեշտել է, որ այս ուղղությամբ արձանագրվում է իսկապես պատմական առաջընթաց: «Մենք միակ պետություն ենք աշխարհում, ում հետ Եվրոպական միությունը ակտիվ խոսում է վիզաների ազատականացման հարցով: Գիտեմ, թե որքան մեծ է հանրային սպասումը վիզաների ազատականացման գործընթացի շուրջ, ուստի բաց, թափանցիկ եւ պատասխանատու կերպով ձեզ հետ կիսվում ենք յուրաքանչյուր զարգացմամբ»,- նշել է Սարգսյանը: Նախարարի խոսքով՝ երկխոսության պաշտոնական մեկնարկից հետո Հայաստանը ռեկորդային սեղմ ժամկետում եւ բարձր վստահության պայմաններում ստացել է գործողությունների ծրագիրը, իսկ օրեր առաջ Եվրոպացի գործընկերները ներկայացրել են առաջին առաջընթացի զեկույցը: «Մի շարք ուղղություններով Հայաստանը գրանցել է առաջանցիկ տեմպեր: Այսինքն՝ արել ենք ավելին, քան նույնիսկ ակնկալվում էր այս փուլում»,- ընդգծել է ՆԳ նախարարը՝ հավելելով, որ հայկական կողմի ջանքերն ու առաջընթացը բարձր է գնահատել նաեւ Եվրոպական հանձնաժողովի նախագահը: Ամփոփելով խոսքը՝ որպես հայկական կողմի բանակցող, Արփինե Սարգսյանը վստահեցրել է. «Սա մեզ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նոր հնարավորությունների, ավելի սերտ կապերի եւ Եվրոպային ավելի մոտ լինելու մասին է: Վստահեցնում եմ, որ շարունակելու ենք հետեւողական աշխատանքը՝ հստակ քայլերով առաջ շարժվելով դեպի առանց վիզայի ազատ տեղաշարժի եւ արժանապատիվ ճամփորդության նպատակը»:

ՎԵՆԴԵՏԱՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԻԿՆԱՔՈՐԻ ԴԵՐՈՒՄ

ՀՀ իրավապահ համակարգում խառնաափոթ իրավիճակ է ստեղծվել: ArmLur.am-ին տեղեկություններ փոխանցվեցին, որ վերջին շրջանում աղմկահարույց սպանությունների իրական գործերով ՀՀ ֆինչական կոմիտեն զրույցներ է ուղարկում ոստիկանություն՝ հորդորելով աղահովել կոնկրետ անձանց անվտանգությունը: Արդյունքում ոստիկանությունը, բուն գործերով զբաղվելուց զատ, ստիպված է ուժեր կենտրոնացնել սպանությունների գործերով անցնող անձանց, նրանց հարազատների, ինչպես նաեւ տուժողների ընտանիքների անվտանգության ապահովման վրա: Ասել է թե՝ թիկնազոր է աշխատում:



Ստացվում է, որ աղմկահարույց քրեական գործերով հնարավոր վենդետաները կանխելու համար իրավապահ համակարգը հայտնվել է բավական բարդ եւ անելանելի վիճակում: Ոստիկանությունը մի կողմից պետք է ապահովի հասարակական կարգը, մյուս կողմից՝ կանխի հնարավոր նոր հանցագործությունները այն համայնքներում, որտեղ սպանություններից հետո կրքերը դեռ չեն հանդարտվել:

Եւ այսպես, ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ իրավապահներն այս օրերին ապահովում են Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Արամուս բնակավայրում 4 ժամվա ընթացքում 4 անձի կյանք խլած սպանության գործով կալանավորված, ՔՊ անդամ ներկայացած Թադեւոս Հովակիմյանի հարազատների անվտանգությունը:

Մայիսի 6-ին էլ հայտնի դարձավ, որ սպանության փորձ է կատարվել Կոտայքի մարզի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շտաբի պետ Գեւորգ Սարգսյանի նկատմամբ: Ըստ առկա տեղեկությունների՝ հանցագործությունը կատարած անձինք Հայաստան էին ժամանել Բելառուսի Հանրապետությունից: Ներկա պահին ոստիկանությունը կրկին ուժեղացված հսկողություն է իրականացնում Գեւորգ Սարգսյանի շուրջ, եւ ամբողջ օրվա ընթացքում ոստիկանները ապահովում են նրա անվտանգությունը:

Լարված իրավիճակ է նաեւ Արմավիրի մարզի Շենիկ գյուղում: Այնտեղ կրքերը դեռ չեն հանդարտվել: 2,5 տարի առաջ տեղի ունեցած կռիվը վերածվել է սպանության, եւ ներկայումս Շենիկում ոստիկանները հսկողություն են իրականացնում ինչպես սպանության գործով կալանավորվածի, այնպես էլ տուժողների հարազատների նկատմամբ՝ հնարավոր վենդետան կանխելու նպատակով:

Նույն պատկերն է նաեւ Արմավիրի մարզի Փարաքար համայնքում: Փարաքարի համայնքապետ Վալոդյա Գրիգորյանի սպանությունից արդեն 8 ամիս է անցել, սակայն Մերձավանում ոստիկանությունը շարունակում է անվտանգություն իրականացնել սպանության գործով կալանավորված անձանց եւ ենթադրյալ կատարողների տների մոտակայքում: Նպատակը նույնն է՝ կանխել հնարավոր նոր մարդասպանությունը կամ վրեժխնդրության փորձը:

Այսպիսի օրինակները կարելի է շարունակել: Աղմկահարույց սպանությունների գործերով մի շարք համայնքներում իրավիճակը շարունակում է լարված մնալ, իսկ ոստիկանությունը ստիպված է ոչ միայն հետաքննել եւ սպասարկել քրեական գործերի շուրջ ստեղծված իրավիճակը, այլեւ փաստացի կանխել նոր բախումներ ու հնարավոր վենդետաներ: Թեեւ Փարաքարում դա հնարավոր չեղավ. Վալոդյա Գրիգորյանը սպանվեց:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՐՎ Է ՍՊԱՌՆՈՒՄ ԱԺ ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ

Ամբ նախկին դատգամավոր Տաթեւիկ Հայրապետյանին մազ կտրելու սարքը ձեռքին տղամարդը հետապնդում եւ սպառնում է: Վերջինս դատարանում դիմել իրավապահներին եւ գրավոր հաղորդում ներկայացնել:

Տաթեւիկ Հայրապետյանը գրում է.

«Հարգելի ԱԱԾ, ՀՀ ներքին գործերի նախարարություն եւ ՀՀ գլխավոր դատախազություն,

Սույն գրառումս հաղորդում է հանցագործության մասին:

Արդեն տեւական ժամանակ է՝ գտնվում եմ ինձ անծանոթ անձի կողմից հետապնդումների եւ անձնական բնույթի սպառնալիքների ներքո: Դրանք հատկապես ակտիվանում են իմ յուրաքանչյուր հանրային հարցազրույցից հետո: Մասնավորապես, ավելի քան մեկ տարի է, ինչ նշված անձն անդադար բացում է տարբեր օգտահաշիվներ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում: Այդ հաշիվներից ինձ ուղարկում է նամակներ իմ հանրային ակտիվության վերաբերյալ, ինչպես նաեւ իմ մասին հրապարակումների տակ գրում է մեկնաբանություններ, որոնք ակնհայտորեն պարունակում են սպառնալիք: Օրինակ՝ գրառումներից մի քանիսն ունեն հետեւյալ բովանդակությունը. «Ես կարող եմ նաեւ ուրիշ ճանապարհով սա անել, բայց չեմ ցանկանում Ձեզ նեղություն տալ»: Մեկ այլ դեպքում գրել է. «Ես Ձեզ ցույց տվեցի, որ, եթե ցանկանամ, կարող եմ Ձեզ նեղություն տալ: Փառք Աստծո, ունեմ այդ հնարավորությունը, բայց դա ամենատհաճ բանն է...» կամ «թե հակառակը՝ կոպիտ վարվեմ Ձեզ հետ, ստիպեմ, խեղդեմ», «խառնված էիք... հասկացաք, որ դամագացա եմ լինելու» եւ այլն: Տեւական ժամանակ է՝ արգելափակում եմ այդ օգտահաշիվները, սակայն նա անընդհատ սպառնում է, որ որքան էլ արգելափակեմ, միեւնույնն է՝ շարունակելու է հետապնդել ինձ, այսինքն՝ կարող է բացել անթիվ օգտահաշիվներ:

Վերջին շրջանում հետապնդումները տեղի են ունենում նաեւ սոցիալական մեդիայից դուրս՝ իմ հարցազրույցներից անմիջապես հետո: Օրինակ՝ մայիսի 10-ին՝ առավոտյան ժամը 11:15-ի սահմաններում, երբ դուրս եկա բնակարանից, տեսա, որ նա շենքի բակում ինձ է սպասում 37PC141 պետհամարանիշով «Նիվա» մակնիշի ավտոմեքենայի մեջ: Ինձ նկատելով՝ նա դուրս եկավ մեքենայից եւ դա արեց ցուցադրաբար, որպեսզի ես դա տեսնեմ: Ես տեսանկարահանեցի ավտոմեքենան եւ նրան, ապա արագ հեռացա այդ վայրից: Բացի այդ, նշված անձը մեր բակում հայտնվում է նաեւ երեկոյան ժամերին, երբ մութն ընկնում է, սպասում է տանից իմ դուրս գալուն կամ տուն վերադառնալուն, գրառումներ է անում դրա մասին, փորձում է քայլել իմ հետեւից, կատարում է ֆիզիկական անկանոն շարժումներ՝ նպատակ ունենալով ահաբեկել կամ վախ առաջացնել: Նրա գործողությունները հանդիսանում են անօրինական հոգեկան ներգործություն իմ նկատմամբ, ինչպես նաեւ պարունակում են ֆիզիկական ներգործության իրական վտանգի սպառնալիք: Նա զուգահեռում է սոցիալական ցանցերում հետապնդումը իրական կյանքում իրականացվող գործողությունների հետ՝ ցույց տալով իր հետեւողականությունը: Օրինակ՝ եթե գրում է, որ սպասում է ինձ շենքի մոտ, ապա փաստացի հայտնվում է այդ վայրում՝ ինձ ահաբեկելու նպատակով: Դրանով ցույց է տալիս, որ իր հետապնդումներից խուսափել չեմ կարող, եւ իր սպառնալիքները կիրագործի:

Այս ամենը ինձ համար առաջացնում է լուրջ անհանգստություն: Նշված անձը նպատակ ունի տագնապ առաջացնել իմ եւ իմ ընտանիքի մոտ, եւ առկա են նաեւ ֆիզիկական ներգործության սպառնալիքներ:

Կից ներկայացնում եմ տեսանյութ, ինչպես նաեւ մի քանի սքրինշոթներ նրա գրառումներից եւ մեկնաբանություններից, որոնք նա, գրելուց ժամեր անց, արագորեն հեռացնում է՝ փորձելով մաքրել հետքերը:

Սա ակնհայտորեն կապված է իմ հանրային եւ հասարակական գործունեության հետ: Ես ակտիվորեն քննադատում եմ ներկայիս իշխանություններին եւ զբաղվում եմ Ադրբեջանից եկող վտանգների, ինչպես նաեւ այնտեղ պետական մակարդակով մշակվող ծրագրերի բացահայտմամբ՝ մեր հանրության համար: Վստահ եմ, որ մեքենայի համարանիշի եւ տեսագրության հիման վրա հնարավոր կլինի արագ հայտնաբերել նշված անձին եւ պարզել, թե ինչու եւ ինչ հանգամանքներում է նա սկսել ինձ հետապնդել եւ սպառնալ՝ սկզբում սոցիալական ցանցերում, իսկ այժմ նաեւ իրական կյանքում:

Հույս ունեմ, որ արագորեն կբացահայտվեն նրա գործողությունների շարժառիթները, եւ իմ կյանքի ու ֆիզիկական անվտանգության նկատմամբ ուղղված սպառնալիքները կվերանան, իսկ նման անօրինական եւ վտանգավոր վարքագիծը կկանխվի: Կսպասեմ ձեր արձագանքին՝ իմ հետագա քայլերը պլանավորելու համար»:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության եւ Երեւան քաղաքի վարչության ծառայողները համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում մայիսի 7-ին Երեւան քաղաքի Մայիսի 9-ի փողոցի շենքերից մեկում հայտնաբերել, ձերբակալել եւ Երեւան քաղաքի վարչություն են տեղափոխել 31-ամյա մի երիտասարդի, որը 2021թ. դեկտեմբերի 1-ից հետախուզվում էր զենքի գործադրմամբ խուլիգանության եւ ապօրինի կերպով զենք-զինամթերք ձեռք բերելու եւ կրելու մեղադրանքով: Նրա նկատմամբ խափանման միջոց էր ընտրվել կալանքը:

ԿԱՄԵՑՎԵԼ Է

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի սննդամթերքի անվտանգության վարչության տեսուչների կողմից «ՊԻՑՑԱ ՏԱՇԻՐ» ՍՊ ընկերությանը պատկանող հանրային սննդի օբյեկտում (ք. Երեւան, Տիգրան Պետրոսյան 9/5) իրականացված ստուգման ընթացքում արձանագրվել են սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներ, մասնավորապես՝

- սննդի կառույցները նախագծված, կառուցված ու տեղակայված չեն եղել այնպես, որ հնարավոր լինի կատարել համապատասխան խնամք, մաքրում կամ ախտահանում, բացառվի օդից փոխանցվող աղտոտումը եւ ապահովվի համարժեք հիգիենիկ աշխատանքային պայմաններ,
- սննդի տեղափոխման համար նախատեսված սարքավորումը (վերելակը) նախագծված, կառուցված ու տեղակայված չի եղել այնպես, որ բացառվի կեղտի կուտակումը, թունավոր նյութերի հետ շփումը, օտար մասնիկների թափանցումը սննդամթերքի մեջ: Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ «ՊԻՑՑԱ ՏԱՇԻՐ» ՍՊ ընկերությանը պատկանող հանրային սննդի օբյեկտի արտադրական գործունեությունը կասեցվել է: Սահմանվել է հայտնաբերված խախտումները վերացնելու վերջնաժամկետ:

ԿՎԵՐԱԴԱՐՁՎԻ

Արմավիրի մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության լիազորության շրջանակում, 2025թ. մայիսի 14-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ Վաղարշապատ համայնքի ղեկավարի, «Էջմիածնի Շուկա» ՍՊ ընկերության եւ երրորդ անձ Կարեն Մանվելի Գրիգորյանի, Կադաստրի կոմիտեի՝ ի թիվս այլնի, 2015թ. մրցույթներն անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու պահանջներով: Հակակոռուպցիոն դատարանը 2026թ. ապրիլի 16-ի վճռով բավարարել է Արմավիրի մարզի դատախազության հայցը: Վճռով անվավեր են ճանաչվել 1175 քմ եւ 587 քմ մակերեսով, Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ զբոսայգի հանդիսացող 2 հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրելու վերաբերյալ մրցույթները: Որպես անվավերության հետեւանք, ի թիվս այլնի, անվավեր են ճանաչվել նաեւ հողամասերի նկատմամբ ֆիզիկական անձանց անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները: Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքին կվերադարձվեն 1175 քմ եւ 587 քմ մակերեսով հողատարածքները:

● *Մայիսի 4-ից 10-ը ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնում գրանցվել է կեղծ ահազանգի 5 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆՅԻՆԵՐԸ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՈՒԶՈՒՄ

Մայիսի 12-ին՝ կեսօրից հետո, բազմամարդ էրՆոյեմբերյան քաղաքի Ազատության հրապարակը: «Ուժեղ Հայաստան» դաշինքին, Նարեկ Կարապետյանին դիմավորեցին ավանդական աղուհացով: Նոյեմբերյանից 30 կմ հեռավորությամբ գյուղերից՝ Կոթիից, Արճիսից, այլ բնակավայրերից մարդիկ Նոյեմբերյան քաղաք էին եկել, որովհետեւ դժգոհ են Նիկոլ Փաշինյանի իշխանությունից եւ Հայաստանում դրական փոփոխություններ են ուզում:

Հանրահավաքը «Ուժեղ Հայաստան» դաշինքի անդամ, Նոյեմբերյան համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնից պատգամավորության թեկնածու դառնալու պատճառով հրաժարական տված, Նոյեմբերյան համայնքի ավագանու անդամ Մհեր Աղամյանն իր ելույթում ասաց, որ հունիսի 7-ին ընտրողների այլընտրանքն է՝ 300 հազար ադրբեջանցիների Հայաստան գալը կամ Սամվել Կարապետյանի կողմից 300 հազար աշխատատեղերի ստեղծումը:

Տնտեսագիտության թեկնածու Հայկ Ղազարյանն իր ելույթում անդրադարձավ գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրներին, ցածր բերքատվությանը, նաեւ նշեց, որ Նիկոլ Փաշինյանը իշխանությունը որոշել է այս տարվա աշնանը ՀՀ-ում փակել 229 հանրակրթական դպրոց, որից 55-ը՝ սահմանամերձ գյուղերում:

Տպավորիչ էր Բերդավանից սերված ուսուցչուհի Էլիդա Հովհաննիսյանի ելույթը, ով Սամվել Կարապետյանի անուն-ազգանունը ստուգաբանելով՝ նշեց, որ Ս. Կարապետյանը պատմավեպի հերոս Սամվելի նման սխրանք է գործում, նրա ազգանվան Կարապետ բառը ստուգաբանվում է առաջնորդ, ճանապարհ բացող, իսկ ընտրական ցուցակի 3-րդ համարը, 3 թիվը քրիստոնեական ուսմունքում մեծ իմաստ ունի:

«Միավորված հայեր» կուսակցության նախագահ Նաիրի Սարգսյանը, անդրադառնալով կառավարության «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրին, ասաց, որ 300 դպրոցից ընդամենը 60-ն է կառուցված, կառուցվող դպրոցների թվում նշեց իր հայրենի գյուղի՝ Դովեղի դպրոցը, որի նոր շենքի շինարարությունը 5 տարում հիմքից վեր չի բարձրացել, ավելին՝ շինարարության ընթացքում քանդել են գյուղ մտնող հիմնական ճանապարհը: Իր ելույթում Նարեկ Կարապետյանը հայտնեց, որ Զորական գյուղում իրեն հարցրել են, թե արդյոք մինչեւ վերջ պայքարելու են իրենց տված քվեների համար, եւ ստացել են հաստատակամ պատասխան: Ն. Կարապետյանն ասաց, որ իշխանության նպատակն է Սուրբ Էջմիածինը դարձնել իրենց նախարարության պես մի կառույց, ցանկանում են փոխել կաթողիկոսին, որպեսզի իրենց նշանակած կաթողիկոսը մոռացության մատնի հայոց ցեղասպանությունը: Սակայն Սամվել Կարապետյանի շնորհիվ կաթողիկոս փոխելու իշխանական ծրագիրը չի հաջողվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՅՈՒՆԻԲԱՆԿ

ՀԵՏՎՃԱՐ ԱՎԵԼԻ ՔԱՆ 2000 ԲԱՐԵԽԻՂՃ ՓՄՁ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻՆ

2026 թվականի առաջին եռամսյակում Յունիբանկի ՓՄՁ վարկային պորտֆելը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 28%-ով: Անգրավ բիզնես վարկերի պորտֆելն աճել է 71%-ով, իսկ բիզնես լիզինգի պորտֆելը՝ 55%-ով: Այդ մասին լրագրողների հարցերին ի պատասխան՝ «ՓՄՁ պոր տ. ազդեցություն եւ զարգացման մարտահրավերներ» խորագրով համաժողովի ավարտից հետո հայտարարեց Վարչության նախագահի առաջին տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման եւ վաճառքների տնօրեն Դավիթ Պետրոսյանը:

Համաժողովը կազմակերպվել էր ՀՀ Կենտրոնական բանկի, Հայաստանի բանկերի միության եւ Գերմանահայկական հիմնադրամի կողմից: Փոքր եւ միջին բիզնեսին աջակցելը Յունիբանկի ռազմավարական առաջնահերթություններից մեկն է: Բանկը շարունակաբար ընդլայնում է իր ծառայությունների փաթեթը՝ բիզնես հաճախորդներին առաջարկելով առավել հասանելի եւ շահավետ ֆինանսավորման պայմաններ:

«ՓՄՁ-ները կարեւոր դեր են խաղում երկրի տնտեսական զարգացման գործում, եւ մենք ձգտում ենք նրանց համար ֆինանսավորումը դարձնել հնարավորինս հասանելի եւ արագ: Այսօր մեր ՓՄՁ ընդհանուր պորտֆելում չաշխատող վարկերի մասնաբաժինը կազմում է ընդամենը 0.5%, ինչը վկայում է մեր հաճախորդների պատասխանատու մոտեցման մասին: Մեր բարեխիղճ վարկառուներին հավելյալ աջակցելու համար մայիսի սկզբին ավելի քան 2 000 ՓՄՁ վարկառուների տրամադրեցինք հետվճար՝ ՀՀ դրամով պարտավորությունների մնացորդի 1.2% չափով»,-նշեց Դավիթ Պետրոսյանը:

Հայաստանի բանկերի միության նախագահ Դանիել Ազատյանի ներկայացմամբ՝ Հայաստանում գործող 115 հազար ընկերություններից մոտ 16 հազարը ունեն վարկեր, որոնց քանակը հասնում է 56 հազարի: Սա վկայում է այն մասին, որ բանկերում առկա է բիզնեսի վարկավորման մեծ ներուժ: Բիզնեսի զարգացման գործում բանկային ծառայություններն առանցքային դեր ունեն: Յունիբանկի հետ համագործակցության շնորհիվ մենք կարողացել ենք իրականացնել այնպիսի ներդրումներ, որոնք այլ պայմաններում տարիներ կպահանջեին: Այդ արդյունավետ համագործակցության արդյունքում մեր բժշկական գործարանի զարգացումը շուրջ 7-8 տարով առաջ է անցել, ինչը եւս մեկ անգամ փաստում է, թե որքան կարեւոր է ճիշտ ժամանակին ֆինանսավորում ստանալն ու ներդրումներ կատարելու հնարավորությունը»,-ասաց «ՄԵԳԱ ՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի եւ My City Dentist կենտրոնի հիմնադիր տնօրեն Սուրեն Կոլաջին:

Անդրադառնալով ՓՄՁ-ների ներկայացուցիչների հարցերին գրավի նկատմամբ պահանջների վերաբերյալ՝ Յունիբանկի Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը նշեց, որ բանկերը հաճախորդի վարկունակությունը գնահատելիս՝ առաջնորդվում են նաեւ ձեռնարկության կանոնադրական կապիտալի չափով եւ բիզնեսում սեփական ներդրման մակարդակով: Նրա խոսքով՝ տեղական բազմաթիվ ձեռնարկություններում սեփական կապիտալի մասնաբաժինը դեռեւս փոքր է, ինչի հետեւանքով բանկերը ստիպված են ավելի խիստ պահանջներ սահմանել գրավի նկատմամբ:

Նշվեց նաեւ, որ Յունիբանկը մեծ ուշադրություն է հատկացնում անգրավ էքսպրես վարկավորմանը, ինչը ձեռնարկատերերին հնարավորություն է տալիս արագ լուծել ընթացիկ ֆինանսական հարցերը:

Էքսպրես վարկավորումը Յունիբանկի ամենապահանջված ծառայություններից մեկն է: «Միկրո էքսպրես» վարկը տրամադրվում է առանց գրավի՝ մինչեւ 60 ամիս ժամկետով եւ մինչեւ 10 միլիոն դրամ կամ 25 000 ԱՄՆ դոլար գումարի չափով: Գործընթացների ավտոմատացման եւ արհեստական բանականության վրա հիմնված վարկային սքորինգի շնորհիվ վարկի նախնական հաստատումը հնարավոր է ստանալ ընդամենը մի քանի րոպեում: Այս մոտեցումը ձեռնարկատերերին հնարավորություն է տալիս արագ լուծել ընթացիկ ֆինանսական հարցերը: Յունիբանկն ակտիվորեն զարգացնում է նաեւ բիզնես լիզինգը՝ ընդլայնելով ֆինանսավորման հնարավորությունները կորպորատիվ հաճախորդների եւ անհատ ձեռնարկատերերի համար: Բիզնես լիզինգը տրամադրվում է առանց կանխավճարի, իսկ նախնական հաստատումը հնարավոր է ստանալ ընդամենը 5 րոպեում:

Յունիբանկը վերանայել է նաեւ POS տերմինալներով անկանխիկ եղանակով իրականացվող քարտային վճարումների սպասարկման միջնորդավճարները՝ սահմանելով դրանք 0.5%-0.9% Հայաստանում թողարկված քարտերի համար:

ՓՄՁ հաճախորդների սպասարկման որակի բարձրացման նպատակով Յունիբանկը զարգացնում է նաեւ թվային ծառայությունները: Իրավաբանական անձանց համար նախատեսված UNIBusiness Mobile հավելվածի միջոցով հնարավոր է կառավարել հաշիվները, կատարել SWIFT միջազգային փոխանցումներ, ինչպես նաեւ վճարումներ գործընկերներին եւ բյուջե՝ զգալիորեն պարզեցնելով բիզնեսի ամենօրյա ֆինանսական գործառնությունները: Յունիբանկն առաջարկում է նաեւ բազմարժութային բիզնես քարտ, որին կցված են հաշիվներ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով եւ եվրոյով:

ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՆԵՏԵԼ ԵՆ ԱՂԲԱՄԱՆԻ ՄՈՏ

Ախալցխայում Մարդա բնակավայրի եկեղեցիներից մեկից անհայտ անձինք դուրս են բերել սրբապատկերները եւ դրել աղբամանի կողքին: Այս մասին հայտնում է Գրուզիա Օնլայն-ը: Փաստի առթիվ Վրաստանի ՆԳՆ-ն հետաքննություն է սկսել Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածով՝ կրոնական ծիսակատարության կատարմանն ապօրինի խոչընդոտում: Հաղորդվում է, որ այդ տաճարն արդեն երկար տարիներ վեճի առարկա է ուղղափառ եւ Հայ առաքելական թեմերի միջեւ, իսկ ժամերգություններն այնտեղ այլեւս չեն անցկացվում: Հայ առաքելական եկեղեցու հոգեւորական, աբեղա Հակոբ Սահակյանը պատմել է, որ չգիտի, թե ով եւ ինչու է տաճարից դուրս բերել սրբապատկերները: «Երեկոյան ես նույնպես այնտեղ էի: Ամենայն հավանականությամբ, դա տեղի է ունեցել ուշ գիշերը՝ ժամը երկուսից հետո: Ամեն ինչ դուրս էր բերվել՝ սրբապատկերները եւ այլ իրեր: Այդ ամենի վրա աղբ էր լցված: Սրբապատկերները շատ վատ վիճակում էին: Մենք ամեն ինչ հետ ենք տարել եւ դրել իրենց տեղերում: Չգիտենք, թե ով է դա արել: Նորմալ մարդն այդպես չէր վարվի»,-ասել է նա:

● *Ըստ վիճակագրության՝ մայիսի 4-ից 10-ը ՀՀ-ում գրանցվել է ճանապարհատրանսպորտային պատահարի 41 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

«ԵՍ ԿՏԱՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ»

Քանի որ մեր ներկայիս ղեկավարի մեջ այլեւս տղամարդկություն չի մնացել, ես՝ որպես այս ընտրություններում Հայաստանի թեկնածու, կպատասխանեմ մեր երկրի անունից: Այս մասին տեսանյութ է հրապարակել «Միասնության թեւերի» վարչապետի թեկնածու Արման Թաթոյան՝ անդրադառնալով Ադրբեջանի նախագահի այն հայտարարությանը, որ հայերի ատելության պատճառներն ադրբեջանցիների նկատմամբ պետք է ուսումնասիրեն հոգեբույժները, հոգեբաններն ու բժիշկները:

«Պարոն Ալիեւ, թույլ տվեք հարցնել՝ ո՞ւմ պետք է ուսումնասիրեն հոգեբույժները, հոգեբաններն ու բժիշկները՝ այն երկրի՞ն, որի ազգային հերոսը կացնահար մարդասպան է, թե՞ հայերին: Կամ այն երկրի՞ն, որը ավելի շատ կրոնական եւ մշակութային հուշարձաններ է ոչնչացրել, քան ISIS-ը, թե՞ հայերին:

Ավելին, Ձեր ելույթում Դուք մեր երկիրն ու ղեկավարներին մեղադրեցիք Ձեր ժողովրդի դեմ ամենատարբեր հանցագործությունների մեջ:

Առաջ շարժվելով եւ խաղաղության ոգով՝ եկեք պայմանավորվենք. Դուք մեր դեմ մեղադրանքները ներկայացրեք Միջազգային քրեական դատարան, իսկ մենք էլ Ձեր երկրի դեմ հայցեր կներկայացնենք 2022 թվականին Հայաստանի տարածքում Ձեր բանակի գործած ռազմական հանցագործությունների եւ 2023 թվականին Արցախի էթնիկ զտման համար:

Մեր խնդիրները մի օր լուծվելու են, բայց լուծվելու են միջազգային իրավունքի ճանապարհով: Այնպես որ կհանդիպենք դատարանում»,- ասված է Արման Թաթոյանի հրապարակած տեսանյութում: *(Գ)*

ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆ

«Ողջունում ենք ՀՀ հետ երկկողմ առեւտուր իրականացնելու արգելքները վերացնելու վերաբերյալ Թուրքիայի որոշումը, որը Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների կարգավորման գործընթացի հերթական արդյունքն է»,-ասված է ՀՀ ԱԳՆ խոսնակի հայտարարության մեջ: «Այդ որոշումը էական է երկու երկրների միջեւ առեւտրի եւ գործարար շրջանակների միջեւ կապերի ընդլայնման, տարածաշրջանում տնտեսական կապակցվածությունը խթանելու եւ խաղաղության ու բարեկեցության ապահովման տեսանկյունից: Ընդգծենք, որ սա կարեւոր քայլ է երկու երկրների միջեւ լիարժեք ու բնականոն հարաբերությունների զարգացման ուղղությամբ, ինչը կարող է իր տրամաբանական շարունակությունը ստանալ Հայաստան-Թուրքիա սահմանի բացման ու դիվանագիտական հարաբերությունների հաստատման միջոցով»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Երեւանի պետական հենակետային բժշկական քոլեջի 2010թ. քույրական գործ մասնագիտության շրջանավարտ Հասմիկ Տեր-Վարդանյան Վարազդատի դիպլոմը՝ AK № 085403, գրանցման համար՝719:

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ՖԱՍԹ ԲԱՆԿԸ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

Ֆասթ Բանկի գլխավոր գործընկերությամբ եւ «Temple of Arts» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ ա.թ. մայիսի 31-ին Գառնու տաճարի հարակից տարածքում տեղի կունենա «Music Through Centuries» հայ-ավստրիական լայնամասշտաբ մշակութային իրադարձությունը: Միջոցառմանը հանդես են գալու Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախմբի երաժիշտներն ու Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը, որոնք առաջին անգամ մասնակցելու են Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ համատեղ ելույթ կունենան նույն բեմում:

«Music Through Centuries» միջոցառումն իրականացվում է Ավստրիայի քաղաքական ներկայացուցիչների՝ Հայաստան կատարած այցի շրջանակներում: Նախագծի հիմնադիր եւ հեղինակ Արարատ Մղդայանի ու համահիմնադիր Գլադսթոն Մահիբի տեսլականը հանգում է դարերի միջով ձեւավորված երաժշտական ուղեւորության մեջ. միջոցառման ծրագիրը բացահայտում է հնագույն հնչյուններից մինչեւ Մոցարտի եւ Խաչատրյանի դասական գործերը ձգվող երաժշտական պատմություն՝ մեկ բեմում միավորելով Ավստրիայի եւ Հայաստանի մշակութային գեղարվեստական ավանդույթները:

Միջոցառման հատուկ հյուրեր Ինգա եւ Անուշ Արշակյանները կկատարեն բացառիկ, բեմից չներկայացված ստեղծագործություններ՝ հանդիսատեսին փոխանցելով հայ երաժշտարվեստի կենարար շունչը: Երեկոյի ընթացքում հանդես կգան նաեւ հայտնի ջութակահարներ Յոհաննես Տոմբյոկը եւ Ջուլիա Գենգեն:

«Temple of Arts» ՀԿ հիմնադիր եւ նախագծի հեղինակ Արարատ Մղդայանը նշել է, որ միջոցառումը դիվանագիտական նշանակություն ունի եւ դուրս է սովորական համերգի ձեւաչափից. «Մեր ավստրիացի գործընկերների հետ միասին տարիներ շարունակ այցելել ենք Հայաստան տարբեր ծրագրերի շուրջ, եւ ավստրիացի գործընկերները շատ սիրեցին հայկական մշակույթը: Մենք մտածեցինք ստեղծել մի նախագիծ, որը կլինի կամուրջ երկու պետությունների, երկու մշակույթների միջեւ եւ կարող է ցույց տալ նմանությունները: Շատ ուրախ ենք համագործակցել Ֆասթ Բանկի հետ, ուրախ ենք, որ Հայաստանում ընկերություններ կան, որոնք նմանատիպ մշակութային միջոցառումներին եւ նախագծերին աջակցում են», - ասել է նա:

Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախմբի ջութակահար Յոհաննես Տոմբյոկն էլ ընդգծել է, որ այս նախագիծն իր համար հետաքրքիր փորձառություն է լինելու. «Ինձ համար չափազանց հետաքրքիր նախագիծ է. միասին նվագել այնպիսի երաժիշտների հետ, որոնց հետ երբեւէ չեմ նվագել, ովքեր ունեն լրիվ այլ երաժշտական մշակույթ, որը գալիս է ամբողջովին այլ միջավայրից: Հատկապես հետաքրքիր է ինձ համար Արամ Խաչատրյանի երաժշտությունը: Ես նրան դեռ մանկուց եմ ճանաչում, միշտ լսել եմ նրա ստեղծագործությունները եւ հիմա տեսնել դրա ակունքներն ինձ համար շատ հետաքրքիր է», - ասել է երաժիշտը:

Ի դեպ, միջոցառման հասույթի մի մասն ուղղվելու է Արցախից տեղահանված երեխաների կարիքների աջակցմանը:

«Temple of Arts» ՀԿ համահիմնադիր Գլադսթոն Մահիբն էլ խոսել է մշակույթների միջեւ կենդանի երկխոսության կարեւորության մասին՝ դիտարկելով այն որպես փոխադարձ ներշնչանքի աղբյուր. «Ինձ համար այս նախագիծը խորհրդանշում է կապի մի կարեւոր կետ՝ մի տարածք, որտեղ երկու երկրների մշակութային շերտերը միավորվում են: Չնայած իրենց տարբերություններին, նրանք կապված են խորը պատմական հիմքերով եւ ապագայի հանդեպ ընդհանուր տեսլականով: Սա մշակույթների միջեւ կենդանի երկխոսություն է՝ հիմնված հարգանքի, անկեղծ հետաքրքրասիրության եւ փոխադարձ ներշնչանքի վրա: Համերգային ծրագիրն ինքնին իսկապես եզակի է: Դրա հնչողությունը լեռների եւ հնագույն ճարտարապետության գրկում ստեղծում է յուրահատուկ մթնոլորտ, որը եւ վեհաշուք է, եւ մտերմիկ»: «Music Through Centuries» միջոցառման տոմսերը հասանելի են FastTicket հարթակում: Միջոցառումն իրականացվում է նաեւ «Բաղալյան եղբայրներ» ընկերությունների խմբի մաս կազմող ArLeAM-ի եւ Fast Shift-ի գործընկերությամբ: Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է
ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

«ՍԻՄՖՈՆԻԿ ԴԱՍԱ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տավուշցի հարյուրավոր աշակերտներ Team-ի աջակցությամբ հնարավորություն են ստացել մասնակցելու մշակութային կրթական «Սիմֆոնիկ ԴասԱ» ծրագրին, որի նպատակն է դասական երաժշտությունը հասանելի եւ ընկալելի դարձնել դպրոցականների համար, ձեւավորել մշակութային ճաշակ եւ նպաստել արվեստով հեշտաֆրֆրված սերնդի ձեւավորմանը:

«Սիմֆոնիկ ԴասԱ»-ն երկարաժամկետ կրթական ծրագիր է, որն իրականացվում է 2018 թվականից Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի նախաձեռնությամբ: Ծրագիրը միտված է վերափոխելու դասական երաժշտության մասին ավանդական ընկալումները՝ այն դարձնելով ավելի հասանելի եւ հետաքրքիր պատանիների ու երիտասարդների համար, ինչպես նաեւ խթանելով նրանց ներգրավածությունը մշակութային կյանքում:

Ծրագրի շրջանակում իրականացվող ինտերակտիվ դասերի շնորհիվ դպրոցականները ծանոթանում են դասական երաժշտության առանձնահատկություններին, երաժշտական գործիքներին եւ հնարավորություն ունեն ներկա գտնվելու կենդանի համերգների՝ ստանալով անմիջական մշակութային փորձառություն: «Կրթությանն ու մարզերի զարգացմանն աջակցող ծրագրերին զուգահեռ՝ մենք կարեւորում ենք նաեւ մշակութային կրթությունը եւ մշակութային ժառանգության պահպանումն ու փոխանցումը երիտասարդ սերնդին: Ուրախ ենք, որ մեր երկարամյա ռազմավարական գործընկեր Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ համատեղ իրականացրել ենք եւս մեկ նախաձեռնություն, որը նպաստում է երիտասարդների զարգացմանը՝ ներառյալ Հայաստանի մարզերում ապրող երեխաների համար մշակութային կրթության հասանելիության ընդլայնմանը»,-նշում է Team Telecom Armenia-ի կոմերցիոն տնօրեն Տիգրան Ֆրանգյանը:

««Սիմֆոնիկ ԴասԱ»-ի նպատակն է երիտասարդացնել դասական երաժշտության ունկնդրին: Ծրագիրը հատկապես կարեւոր է մարզերի եւ սահմանամերձ համայնքների երեխաների համար, քանի որ այն ոչ միայն զարգացնում է նրանց երեւակայությունը, երաժշտական ճաշակը եւ ինքնավստահությունը, այլեւ հնարավորություն է տալիս նորովի բացահայտելու դասական երաժշտությունը, ինչպես նաեւ հայկական եւ միջազգային մշակութային արժեքները: Շնորհիվ Team-ի հետ համագործակցության՝ ծրագիրը հասանելի է դարձել Կողբ համայնքի հարյուրավոր երեխաների՝ նրանց եւս հնարավորություն տալով դառնալու այս գեղեցիկ մշակութային շարժման մի մասը»,-նշում է «Սիմֆոնիկ ԴասԱ» կրթական ուղղության ղեկավար Տաթեւիկ Ադամյանը:

Ծրագիրը մեկնարկից ի վեր իրականացվել է 200-ից ավելի դպրոցում՝ թե՛ մարզերում, թե՛ մայրաքաղաքում ընդգրկելով մոտ 73 000 աշակերտի: Աշակերտները ներգրավվել են ինտերակտիվ դասերի եւ ներկա գտնվել Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգին:

Team Telecom Armenia-ն վերահաստատում է իր հանձնառությունը՝ շարունակելու աջակցել երիտասարդների կրթությանն ու համայնքային զարգացման ծրագրերի իրականացմանը: Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀՈԴՎԱԾ Գ

ՆՈՐ ՈՐԱԿԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ՝ ՆՈՐ ՈՐԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը կորցնում է մարդկանց. երիտասարդները հեռանում են, որովհետեւ իրենց կարողություններին համապատասխան շուկա այստեղ չկա: Ընտանիքները հեւսածգում են երեխաների ծնունդը. կնոջ համար երեխայի եւ կրթության միջեւ ընտրությունը վերածվել է ծուղակի: Մեւանում ուսուցիչը երբեմն ավելի շաս հարկ է վճարում, քան Երեւանում բիզնես եկամուտներով ապրող ընկերության սեփականատերը, եւ միաժամանակ իր երեխային ուղարկում է դպրոց, որտեղ ֆիզիկայի ուսուցիչ չկա: Այսպես կառուցված է: Դա կարգախոսով չես փոխի:

Երկրի առաջ դրված են նախագծեր՝ բարձր տեխնոլոգիական գյուղատնտեսություն Արմավիրում եւ Արարատյան դաշտում, նոր ատոմակայան Մեծամորում, տվյալների մշակման կենտրոն Հրազդանում, տրանսպորտային եւ էներգետիկ ենթակառուցվածքներ, պաշտպանություն: Այս նախագծերից յուրաքանչյուրն աշխատատեղեր եւ հարկային բազա է տասնամյակների համար: Յուրաքանչյուրը պահանջում է մասնագետներ (կադրեր): Ոչ թե պարզապես նոր, այլ՝ նոր որակի մասնագետներ: Որպեսզի այդ մասնագետներն (կադրերն) ի հայտ գան, պետք է փոխվի հենց նրանց պատրաստման համակարգը: Ուստի, առաջարկում ենք վեց ուղղություն:

1. Պետական պատվեր

Պետությունը պետք է իմանա եւ բարձրաձայն ասի՝ ում եւ որքան մասնագետի կարիք ունի: Կրթության եւ գիտության հարցերի նախարարությունն ամեն տարի պետք է հրապարակի պետական պատվեր. ատոմակայանի համար՝ կոնկրետ մասնագիտացման այսքան ինժեներ, տվյալների կենտրոնի համար՝ այսքան մասնագետ, ջերմոցային կլաստերների համար՝ այսքան գյուղատնտես եւ ոռոգման ինժեներ, մարզային դպրոցների համար՝ այսքան ֆիզիկայի եւ ինֆորմատիկայի ուսուցիչ: Սրանք այն մասնագիտություններն են, որոնք իրականում անհրաժեշտ են երկրին:

Պետական պատվերով կրթությունն անվճար է եւ երաշխավորված պետության կողմից՝ բոլոր հավատարմագրված ծրագրերում, պայմանով, որ ավարտելուց հետո մի քանի տարի պետք է աշխատեն Հայաստանում, հիմնականում՝ Երեւանից դուրս: Պետությունը վճարում է կրթության համար, մարդը վերադարձնում է դա հասարակությանը՝ իր աշխատանքով եւ ժամանակով:

Այսպես Գյումրիում, Գավառում կամ Կապանում սեղանի շուրջ նստած ընտանիքն ու դիմորդը ստանում են փաստաթուղթ, որտեղ հստակ գրված է. այս մասնագիտությունը պետք է երկրին, աշխատատեղը երաշխավորված է, ուսումը՝ անվճար: Սա փոխում է ծնողի եւ երեխայի խոսակցությունը:

2. Կարողությունների վերափոխում

Եթե փոխվում է շրջանավարտից պահանջվող որակը, պետք է փոխվի դպրոցը: Եթե փոխվում է դպրոցը, պետք է փոխվի ուսուցիչը: Այդ պատճառով բարեփոխումը սկսվում է հենց կրթական համակարգի ներսից եւ այնտեղից տարածվում է դուրս:

Պետությունը կստեղծի մասնագիտական վերապատրաստման ուսումնական կենտրոնների ցանց՝ եվրոպական եւ ասիական համալսարանների հետ համագործակցությամբ: Ուսուցիչը երեք տարին մեկ պետք է անցի վերապատրաստում,

բժիշկը՝ երկու տարին մեկ անգամ, իսկ պետական ծառայողը՝ մշտապես ու այս ամենը պետք է լինի անվճար:

3. Հասանելիության հավասարեցում

Հայաստանը չափազանց փոքր երկիր է, որպեսզի տաղանդը որոշվի ծնողների վճարունակությամբ կամ բնակավայրի փոստային ինդեքսով:

Գյուղերից եւ փոքր քաղաքներից եկածների համար՝ ընտանեկան տիպի հանրակացարաններ մայրաքաղաքում, հեռավար կրթական ծրագրեր մարզային աջակցման կենտրոններով, ինչպես նաեւ ուսուցչի, բժշկի, գյուղատնտեսի կամ անասնաբույժի երաշխավորված աշխատանք իրենց մարզում՝ ավարտելուց հետո, բարձրացված վճարով եւ ծառայողական բնակարանով: Մարտունուց կամ Ճամբարակից երիտասարդը այլեւս չի ընտրի «մշտապես հեռանալ» եւ «մասնագիտություն չունենալով վերադառնալ» տարբերակների միջեւ: Ընտանիքների համար՝ մեկ տարեկանից անվճար նախադպրոցական կրթության երաշխիք՝ առանց «հնարավորության դեպքում» ձեւակերպումների: Մայրության նպաստներ՝ կապված իրական աշխատավարձի հետ: Մայրության արձակուրդում գտնվելու ընթացքում ուսումը շարունակելու կամ վերապատրաստում անցնելու իրավունք՝ անվճար, հեռավար, մանկապարտեզի պետական դրամաշնորհով: Մայրության արձակուրդի ավարտից հետո աշխատանքի վերադարձի երաշխավորված տեղ:

Առանձին՝ կանանց մասին: Երիտասարդ մայրը Երեւանում յուրաքանչյուր երեխայի համար կորցնում է աշխատանքային գործունեության երկու տարի: Տավուշում երիտասարդ մայրը երբեմն կորցնում է ընդհանրապես մասնագիտություն ստանալու հնարավորությունը: Երեխայի ծնունդը չպետք է կնոջից խլի մասնագիտությունը՝ թբե մայրաքաղաքում, թբե Տավուշում:

4. Ինտեգրում համաշխարհային ցանցերին՝ սփյուռքի միջոցով

Հայ ուսանողը մեկ կիսամյակ սովորում է Բոլոնիայում, մեկ տարի՝ Սեուլում, պրակտիկա անցնում Բանգալորում կամ Սիլիկոնյան հովտում, հետո վերադառնում այդ փորձով: Պետությունը շրջանակային համաձայնագրեր է կնքում ԵՄ-ի, Ճապոնիայի, ԱՄՆ-ի, Հնդկաստանի եւ Ռուսաստանի համալսարանների հետ՝ իրական ակադեմիական փոխանակումների համար, ոչ թե արարողակարգային հուշագրերի:

Այն մասնագիտությունների համար, որոնք Հայաստանում չկան, արտասահմանյան մագիստրոսական ծրագրերը համաֆինանսավորվում են պետության կողմից՝ վերադարձի եւ Հայաստանում աշխատանքի պայմանով:

Այստեղ սփյուռքը պետք է հանդես գա որպես գործընկեր: MIT-ում, ԵՊՀ-ում, Սորբոնում, Սեուլի եւ Բանգալորի ինստիտուտներում աշխատող հայ պրոֆեսորներն արդեն գոյություն ունեցող ցանց են: Պետությունը նրանց կառաջարկի հստակ դերեր՝ հայկական համալսարանների հետ համատեղ ամբիոններ, լաբորատորիաներ կոնկրետ խնդիրների համար (ԱԷԿ, ագրոբիոտեխնոլոգիա, SS անվտանգություն), կրթաթոշակներ հայ ուսանողների համար՝ վերադարձի պարտավորությամբ: Փոխարենը՝ թափանցիկ եւ հավասար կանոններ սփյուռքյան նախագծերի համար Հայաստանում: Սա փոխշահավետ գործարք է:

5. Միջին մասնագիտական կրթություն

Առանց տեխնիկների եւ օպերատորների ինժեներական համակարգը կախված է օդում: Ատոմակայանում մեկ ինժեների հաշվով աշխատում է տասը օպերատոր եւ տեխնիկ: Այդ տասը մարդկանց այսօր Հայաստանում պատրաստելու տեղ գրեթե չկա, որովհետեւ քոլեջները ավելի շատ են քայքայվել, քան կրթության մյուս մակարդակները:

Պետությունը նախատեսելու է, որ դպրոցն ավարտող աշակերտը միաժամանակ ստանում է նաեւ միջին մասնագիտական կրթություն, եթե ավարտում է 9+2 տարին (12-րդ տարին կամավոր է, բուհ ընդունվել ցանկացողների համար): Աշակերտը ստանում է կրկնակի կրթություն. շաբաթվա կեսը՝ քոլեջում, կեսը՝ արտադրությունում: Ավարտական աշխատանքը՝ իրական արտադրական խնդիր: Կրթաթոշակը երաշխավորված է, հանրակացարանը կա, աշխատատեղը նախապես ամրագրված է ուսումնական պայմանագրում:

6. Գիտություն եւ հետազոտություններ

Առանց գիտության կրթությունը պատրաստում է միայն կատարողներ: «Նոր որակի» նախագծերի համար երկիրը պետք է ստեղծի նոր գիտելիք, ոչ թե միայն սպառի ուրիշների ստեղծածը:

Հայկական գիտական դպրոցը թուլացել է, բայց ոչնչացված չէ: Աշտարակի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը, Երեւանի մաթեմատիկական դպրոցը, քիմիական լաբորատորիաները՝ սա արդեն գոյություն ունեցող հիմք է: Պետությունը վերադարձնելու է նպատակային ֆինանսավորում կոնկրետ խնդիրների համար՝ նյութագիտություն եւ ռեակտորային ֆիզիկա նոր ԱԷԿ-ի համար, կիրառական մաթեմատիկա եւ կրիպտոգրաֆիա Հրազդանի տվյալների կենտրոնի համար, կենսատեխնոլոգիաներ եւ սելեկցիա ագրոարդյունաբերական կլաստերի համար:

Երիտասարդ գիտնականներին կտրվեն դրամաշնորհներ՝ պաշտպանությունից հետո մի քանի տարի Հայաստանում աշխատելու պարտավորությամբ: Համալսարանների եւ ձեռնարկությունների համատեղ լաբորատորիաները կստանան իրական ֆինանսավորում եւ իրական հաշվետվողականություն: Արտերկրում աշխատող հայ գիտնականների վերադարձը կկազմակերպվի կոնկրետ պաշտոններով եւ եվրոպական պայմաններին համարժեք հնարավորություններով:

Երկիրը, որը գիտելիք չի ստեղծում, դրանք ներմուծում է օգտագործման պայմանների հետ միասին. ատոմակայանում՝ կախվածություն մատակարարից, տվյալների կենտրոնում՝ օտարերկրյա օպերատորից, գյուղատնտեսությունում՝ սերմերի եւ ցեղատեսակների արտաքին մատակարարներից: Այսօր տնտեսությունն աշխատում է հենց այդպես:

Երբ պետությունը գիտի՝ ում է պատրաստում եւ ինչի համար, կրթությունը դադարում է դառնալ երկրից հեռանալու միջոց: Այն դառնում է մնալու եւ կառուցելու միջոց: Հարկերը հենց դրա համար էլ հավաքվում են:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԳՈՂԱՑԵԼ ԵՆ 18 ՄԻԱՎՈՐ

Լա Լիգայի այս մրցաշրջանում մրցավարական որոշումների հետեւանքով Մադրիդի «Ռեալից» գողացել են 18 միավոր: Այդ մասին հայտարարել է Արքայական ակումբի նախագահ Ֆլորենտինո Պերեսը, գրում է News.am-ը: «Ինչպե՞ս կարող եմ չբարկանալ: Իմ օրոք «Ռեալը» նվաճել է Լա Լիգայի 7 տիտղոս, բայց պետք է ունենար 14 տիտղոս: Ինձ զրկել են 7 տիտղոսից: Այս մրցաշրջանում նրանք մեզնից գողացել են 18 միավոր: «Ռեժիմի ինտելեկտուալները» մեզ վնաս են հասցնում:

ABC թերթը պատկանում է մի ընկերության, որը ստեղծել է Relevo պարբերականը: Լա Լիգայի հետ պայմանագրով նրանք կենտրոնացել են թվային թերթի թողարկման վրա: Նրանց ֆինանսական կորուստը կազմել է 25 միլիոն եվրո, որը վճարել է Լա Լիգան: Relevo-ի միակ նպատակը «Ռեալի» վրա հարձակվելն է եւ ինձ թիրախավորելը»,- Պերեսի խոսքը մեջբերում է AS-ը: Իսպանիայի առաջնության 35 տուրից հետո «Ռեալը» 77 միավորով երկրորդն է: Չեմպիոնի տիտղոսն ապահովել է «Բարսելոնան»՝ 91 միավոր:

«ԱՐԺԱՆԻՈՐԵՆ ՆՎԱՃԵՑԻՆՔ»

Իտալիայի նորընծա չեմպիոն Միլանի «Ինտերի» ռումինացի գլխավոր մարզիչ Կրիստիան Կիվուն հույս է հայտնել, որ կնվաճեն նաեւ Իտալիայի գավաթը Հռոմի «Լացիոյի» դեմ եզրափակիչում, հայտնում է News.am-ը: «Մրցակիցը կունենա լրացուցիչ մոտիվացիա եզրափակիչում: Մենք պետք է լինենք համեստ եւ պահպանենք ճիշտ տրամադրվածությունը: Բայց մենք նաեւ պետք է հիշենք, որ արժանիորեն նվաճեցինք չեմպիոնական տիտղոսը եւ Իտալիայի գավաթի եզրափակիչում խաղալու իրավունքը: Ցանկանում ենք այդ իրավունքը լավագույնս իրացնել եւ նվաճել նաեւ գավաթը»,- Կիվուի խոսքը մեջբերում է միլանյան ակումբի կայքը: Իտալիայի գավաթի եզրափակիչը տեղի կունենա մայիսի 13-ին եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով 23:00-ին:

ՊԱՏՐԱՍՏ Է 150 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ ՎՃԱՐԵԼ

Ֆրանսիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր ՊՍԺ-ն ցանկանում է այս ամռանը ձեռք բերել Մադրիդի «Աթլետիկոյի» հարձակվող Խուլիան Ալվարեսին: Կողմերն արդեն սկսել են բանակցությունները, հաղորդում է El Chiringuito TV-ն: Այս մասին գրում է News.am-ը:Փարիզյան ակումբը պատրաստ է 26-ամյա ֆուտբոլիստի տրանսֆերի համար վճարել 150 միլիոն եվրո: Խուլիան Ալվարեսի ծառայություններով հետաքրքրված են նաեւ «Բարսելոնան» եւ Լոնդոնի «Արսենալը»: Իսպանիայի ընթացիկ առաջնությունում Խուլիան Ալվարեսը մասնակցել է 29 հանդիպման, խփել է 8 գոլ:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում մայիսի 16-ին՝ ժամը 18:00-ին, կկայանա «Սպարտակ» բալետը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Քանի հրապարակած գիտական աշխատանք է անհրաժեշտ թեկնածուական եւ դոկտորական ատենախոսությունների պաշտպանության համար:

Արեգ Հովհաննիսյան, 29 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության համար անհրաժեշտ նվազագույն քանակական չափանիշներն են՝ վեց գիտական հոդված, այդ թվում՝ առանց համահեղինակների՝ երկուսը, կամ առնվազն երեք գիտական հոդված, այդ թվում՝ առնվազն մեկ հոդված՝ Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որեւէ մեկում, եւ մեկ հոդված՝ առանց համահեղինակների: Դոկտորական ատենախոսությունների պաշտպանության համար անհրաժեշտ նվազագույն քանակական չափանիշներն են՝ քսան գիտական հոդված, այդ թվում՝ առնվազն հինգը՝ Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որեւէ մեկում: Հայագիտական բնույթի աշխատանքների դեպքում անհրաժեշտ նվազագույն քանակական չափանիշներն են՝ քսան գիտական հոդված, այդ թվում՝ առնվազն մեկը՝ Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որեւէ մեկում: Առանց համահեղինակների աշխատանքների թիվը պետք է լինի առնվազն հինգ (փորձարարական կամ կլինիկական բնույթ ունեցող ատենախոսությունների դեպքում՝ երկու): Մենագրության դեպքում (առնվազն 14 տպագրական մամուլ ծավալով) գիտական հոդվածների թիվը կրճատվում է մինչեւ տասնհինգ: Գիտական զեկուցմամբ պաշտպանության դեպքում անհրաժեշտ է առնվազն հիսուն գիտական հոդված՝ տվյալ թեմայի շրջանակներում, որոնցից առնվազն հինգը՝ Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որեւէ մեկում:

Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ստանալ վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա:

Սերժ Գալստյան, 34 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Վիճակախաղերի կազմակերպման լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 987-Ն որոշման համաձայն: Վիճակախաղերի կազմակերպման լիցենզիան տրամադրվում է անժամկետ: Վիճակախաղերի կազմակերպման լիցենզիան տրամադրվում է նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում (լիազոր մարմնի որոշմամբ կարող է երկարաձգվել եւս 23 աշխատանքային օրով) վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Հայտատուները վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 01.07.2004թ. թիվ 987-Ն որոշմամբ հաստատված հայտը եւ կից փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային տարբերակով: Հայտատուները կարող են լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1283-Ն որոշման: Լիցենզիա ստանալու համար տարեկան պետական տուրքը կազմում է 600 000 000 ՀՀ դրամ: Հայտատուն վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա ստանալու համար Կենտրոնական գանձապետարանի 900005162137 հաշվեհամարին վճարում է 600 000 000 ՀՀ դրամ եւ կարող է լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացնել:

Հայտարարագիր՝ «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի 4.1-ին հոդվածով կիրառվող պահանջների համապատասխանության վերաբերյալ

Տեղեկատվություն եւ խորհրդատվություն ստանալու համար զանգահարել (+37411) 800-368 հեռախոսահամարով:

ՀՀ ֆինանսների նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի

ՔՊ-ի նախընտրական գովազդը՝ սպանդանոցային կետի ֆոնին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 2 + 5 + 15 + 20
	Կոտայքի լեռներ	+ 2 + 5 + 16 + 19
	Կոտայքի նախալեռներ	+ 9 + 12 + 18 + 21
	Գեղարքունիք	+ 2 + 5 + 16 + 20
	Լոռի	+ 3 + 7 + 20 + 24
	Տավուշ	+ 6 + 9 + 22 + 25
	Արագածոտնի լեռներ	+ 1 + 4 + 15 + 18
	Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 11 + 17 + 22

	Արարատ	+ 8 + 11 + 20 + 23
	Արմավիր	+ 9 + 13 + 23 + 26
	Վայոց ձորի լեռներ	+ 3 + 6 + 14 + 17
	Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 13 + 22 + 25
	Սյունիքի լեռներ	+ 3 + 6 + 14 + 17
	Սյունիքի նախալեռներ	+ 5 + 9 + 20 + 24
	Սյունիքի հովիտներ	+ 12 + 15 + 25 + 28
	Երեւան	+ 11 + 13 + 22 + 24

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.05.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*